Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016թ. մարտի 11-ին Քանաքեռ-Զեյթունի ոստիկանության բաժնում հաղորդում է տվել Մարինե Սերգեյի Ավետիսովան այն մասին, որ 07.03.2016թ-ին իր բնակարանի՝ Երևան քաղաքի Զուլակյան փողոցի 4-րդ տան բանալիները, տվել է իր հարևանուհի Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովային որպեսզի հետևի բնակարանին, իսկ վերջինս օգտվելով բանալիներն իրեն վստահված լինելու հանգամանքից, բանալիով բացել է նշված տան դուռը մուտք է գործել ներս և Մ.Ավետիսովայի ննջասենյակի մահճակալի ներքնակի տակից հափշտակել է զգալի չափի 23.000 ՀՀ դրամ գումար և վերջինիս «Յունիբանկ» ՓԲԸ-ի պլաստիկ քարտը: Նույն օրը պլաստիկ քարտից՝ Երևան քաղաքի Ազատության պողոտա 12 շենքի 1-ին հարկում գործող «Պրոմթեյ բանկ» ՓԲԸ-ի պահեստարան համարվող բանկոմատից կանխիկացրել է զգալի չափի՝ 30.000 ՀՀ դրամ գումար:

Դեպքի առթիվ 22.03.2016թ. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ կասկածյալ՝ Սուսաննա Լյուդվիգի Մարտիրոսովան չնայած որ ազգությամբ հայ է, սակայն նա չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ունի ռուսերեն կրթություն, ուստի գործով անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ, որը կարող է թարգմանել հայերեն գրավոր և բանավոր լեզվից, ռուսերեն գրավոր, բանավոր լեզվին և ընդհակառակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջները.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 09108816 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Ֆինլոու» ՍՊԸ-ի տնօրեն Վարդուհի Ավետիսի Շահինյանին, ով տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր, բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություն հայերեն գրավոր, բանավոր լեզվից՝ ռուսերեն գրավոր, բանավոր լեզվին և ընդհակառակը:
2. Վարդուհի Ավետիսի Շահինյանին նախազգուշացնել ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, նրան միաժամանակ ծանոթացնել թարգմանիչի իրավունքների և պարտականությունների հետ:
3. Սույն որոշման մասին հայտնել կողմերին:

Քննիչ՝

Թարգմանիչ



Ն.Հ.Մկրտչյան

Վ.Ա.Շահինյան

ՏԵՂԵԿԱԼՔ

07.10.2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության
Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ն. Մկրտչյանիս
վարությամբ քննվող թիվ 09108816 քրեական գործով 12.04.2016թ. որպես
թարգմանիչ ներգրավված «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ Վարդուհի
Ավետիսի Շահինյանը կատարել է 16 ժամ 35 րոպե տևողությամբ հայերեն-
ռուսերեն-հայերեն բանավոր թարգմանություն, ինչպես նաև սույն քրեական
գործի շրջանակներում կատարել է գրավոր թարգմանություն հայերենից
ռուսերեն՝ 20945 նիշ:

Քանաքեռ-Զեյթուն վարչական
շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ



Ն. Մկրտչյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

12 -ը ապրիլի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Է.Թումադայան, քննարկելով վարույթիս թիվ 86153415 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2015թ. հուլիսի 10-ին, ժամը 12:30-ին Երևան քաղաքի բնակիչ Հովհաննես Արամի խաչատրյանի կողմից ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 76-րդ խցի ցմահ դատապարտյալ Աշոտ Վարազդատի Չատիկյանի անվամբ ներկայացված համձնույնի զննությամբ

Դեպքի առթիվ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է թիվ 86153415 քրեական գործը: 2015թ. հուլիսի 18-ին քրեական գործն ուղարկվել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին և նույն օրն ընդունվել է վարույթ:

Նախաքննության ընթացքում տվյալներ են ստացվել, որ թմրամիջոցը նախատեսված է եղել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ դատապարտյալ Վարազդատ Հովհաննիսյանի համար:

Վարազդատ Հովհաննիսյանը չի տիրապետում հայրերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին, և վերջինիս մասնակցությամբ անհրաժեշտ է կատարել մի շարք քննչական գործողություններ:

Նկատի ունենալով, «Ֆինլոու» ԱՊԸ-ի աշխատակից Անուշ Սուրենի խանիկյանը ունի բարձրագույն կրթություն, ազատ տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Ֆինլոու» ԱՊԸ-ի աշխատակից Անուշ Սուրենի խանիկյանին:

Քննիչ

Է.Թումադայան

Թարգմանիչ *Անուշ Սուրենի խանիկյան*


Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Բ

22.04.2016թ.

ք.Երևան

Տրվում է «Ֆինլոու» ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Խանիկյանին, առ այն, որ նա ՀՀ ՔԿ Էրևբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 86153415 քրեական գործով մասնակցել է որպես լուսնորենի թարգմանիչ և կատարել է 18 ժամ թարգմանություն:

Էրևբունի և Նուբարաշեն վարչական
շրջանների քննչական բաժնի քննիչ



Լ.Թումադայան

Որոշում
թարգմանիչ հրավիրելու մասին

ք.Երևան

13 ապրիլի 2016թ.

«Ճ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության կապիտան Գ.Սաղոյանս, վերանայելով վարույթիս թիվ 16116916 քրեական գործի նյութերը

Պարզեցի

2016թ. ապրիլի 12-ին ոստիկանության գործերի թիվ 1033 զորամասի ծառայող Իգոր Թովմասյանը ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը, ժամը 00:35-ին Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցում գտնվող «Սաֆիր», գիշերային ակումբի նկատելով վիճաբանող անձանց, մոտեցել է նրանց ու փորձել է կարգի հրավիրել, սակայն այդ անձինք իր օրինական պահանջներին չեն ենթարկվել, իսկ նրանցից մեկը, նստելով ԲՄՎ մակնիշի, 98 ՔՔ 088 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, այն հետընթաց վարել է իր ուղղությամբ, ավտոմեքենայով հարվածել իրեն, ապա դիմել փախուստի: Հարվածի արդյունքում ինքն ստացել է ոտքի կոտրվածք:

Թովմասյանի զեկուցագրի առթիվ ոստիկանության Մալաթիայի բաժնում նախապատրաստվել են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2016թ. ապրիլի 12-ին, ժամը 00:00-ից 00:30-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցում գործող «Սաֆիր», գիշերային ակումբի բակում Արման Վաչագանի Հովհաննիսյանը, Արսեն Վաչագանի Հովհաննիսյանը և Մանվել Միշայի Մեսրոպյանը վիճաբանել են նույն ակումբի անվտանգության աշխատակիցների հետ, որի ընթացքում կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Դեպքի առթիվ 2016թ. ապրիլի 12-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում «Ճ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 16116916 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել «Սաֆիր», գիշերային ակումբի անվտանգության աշխատակից Նարեկ Դաբադյանին, սակայն պարզվել է, որ վերջինս չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ «Ճ-ում դատավարության լեզուն հայերենն է, իսկ Ն.Դաբադյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ճ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով,

ՏԵՂԵԿԱՆՔ

/թիվ 16116916 քրեական գործով/

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Սաղոյանս, վարույթումն քննվող թիվ 16116916 քրեական գործով 13.04.2016 թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Սուրենի Խանիկյանին, ով սույն քրեական գործով կատարել է 3 ժամ տևողությամբ բանավոր թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

**ՀՀ քննչական կոմիտեի
Երևան քաղաքի քննչական վարչության
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ՝**



Գ.Սաղոյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

13 ապրիլի 2016թ

ք.Երևան

ՀՀ Զննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչակ. շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության կապիտան Ս.Ս.Ռաֆայելյա. քննարկելով թիվ 14119016 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի մարտի 21-ին՝ ժամը 16:45-ի սահմաններում, Գոռ Վոլոդյայի Պողոսյա ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, Երևան քաղա. Բաղրամյան 56 հասցեում գտնվող կանգառում՝ թիվ 37 երթուղային ավտոբուսում, պայուսա ճարմանողը բացելու միջոցով գաղտնի հափշտակել է Աննա Ռազմիկի Արշակյս դրամապանակը, որի մեջ եղել է 4000 ՀՀ դրամ, 56.720 ՀՀ դրամին համարժեք 8000 ՌԴ ռուբ 1089.56 ՀՀ դրամին համարժեք 2 եվրո, տարբեր զեղչային և կուտակային քարտեր և «Վ. Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բանկային քարտ:

Փաստի առթիվ 02.04.2016թ. Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում քրեական օրենսգրքի 177 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 14119 քրեական գործը:

Նկատի ունենալով, որ Գոռ Վոլոդյայի Պողոսյանը չի տիրապետում հայերեն գրա լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն բնձնեռել նրան թարգմանչի օգնությւ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15. : 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 14119016 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել <Ֆինլոու> ՄԴ թարգմանիչ Շովինար Խոսրովի Թորոսյանին, որն ունի բարձրագույն կրթություն, ավարտ Երևանի ԵՊՀ-ի բանասիրության ֆակուլտետը, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսե լեզուներին, որը գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Շովինար Խոսրովի Թորոսյանին պարգաբանել պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանութ կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեա պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ

Ս.Ս.ՌԱՖԱԵԼՅԱՆ

Սույն որոշումն ինձ հայտնվել է 13.04.2016թ. Ես նախազգուշացվել եմ ակնհայտ ս թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատես քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարգաբանել եմ ՀՀ քրեա դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանչի պարտականությունե իրավունքները:

Թարգմանիչ

Ս.Ս.Թորոսյան

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ

Ս.Ս.ՌԱՖԱԵԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 14119016 քրեական գործով

Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս. Մ. Ռաֆա էլյանիս վարույթում քննված թիվ 14119016 քրեական գործով 13.04.2016թ. որոշմամբ որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Ծովինար Թորոսյանին, որը կատարել է 3 ժամ 45 րոպե տևողությամբ ուսերենից հայերեն և հայերենից ուսերեն բանավոր թարգմանություններ:

Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ՝



Ս. Մ. Ռաֆա էլյան

13.04.16թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգման ներգրավելու մասին

13 03 2016թ.

ք. Երևան

« Քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Մուսայանս, քննարկելով թիվ 11123916 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

26.03.2016թ. ոստիկանության Շենգավիթի բաժին է ստացվել Արկադի Արամայիսի դիմումը՝ հասցեագրված «Ոստիկանության պետին այն մասին, որ 2016թ կեսգիշերին Երևանյան լճի հարևանությամբ գտնվող իր պտղատու այգում կայծակաբար տնակից անհայտ անձը հափշտակել է սեղան, աթոռներ, գորգ և այլ իրեր, որից հետո տնակը հրդեհել է:

Փաստի առթիվ 04.04.2016թ «քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ «քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Նկատի ունենալով, որ Արկադի Արամայիսի Պապյանը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի առաջարկվում է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել հարցազրույցները և հարավում սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ և 83-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Որպես թարգման հրավիրել «Ֆինլու» ՍՊ ընկերության տնօրեն, թարգմանչուհի Վարդուհի Ավետիսի Շահինյանին-ին, ով ազատորեն տիրապետում է ռուսերեն և հայերեն գրավոր ու բանավոր լեզվին, կարող է կատարել թարգմանություններն ու ռուսերեն և հակառակը, գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգման Վարդուհի Շահինյանին պարզաբանել իր պարտականությունները և իրավունքները ու նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնելու պարտականություններն ու իրավունքները:

քննիչ՝

Ս. Ա. Քեսայան

Սույն որոշումը ինձ հայտնվել է, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանել են «քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանի պարտականություններն ու իրավունքները:

Թարգման՝

Վ. Բաբայան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

19.10.2016թ.

ք.Երևան

Տրվում է առ այն, որ Շենգակիթ վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 11123916 քրեական գործով «Ֆինլու» ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանը, ներգրավել է 13.04.2016թ-ից նույն բաժնի քննիչ Ս.Բեսալյանի կողմից, և նշված քրեական գործով ընդհանուրը կատարել է 7 ժամ 45 րոպե տևողությամբ բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ՝



Ս.Ավագյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
գործին թարգման ներգրավելու մասին

«14» ապրիլի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության մայրո էդ. Շ. Խալաթյանս, վերանայելով վարույթիս տակ գտնվող թիվ 14121316 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ջ Ե Ց Ի

2016 թվականի մարտի 28-ին ստացված օպերատիվ տվյալներն իրացնելիս Երևան քաղաքի Փափագյան 2-րդ նրբանցքից՝ ապօրինի կերպով սառը զենք կրելու կասկածանքով ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին բերման է ենթարկվել Երևան քաղաքի Ավան 14 փողոցի, 5-րդ նրբանցքի 4^ա տան բնակիչ Ստեփան Վասիլի Ռոժկովը, ում մոտից անձնական խուզարկությամբ՝ վերարկուի աջ գրպանից հայտնաբերվել է մեկ հատ կռիվազենքի նմանողությամբ մետաղյա առարկա:

Նշանակված դատաքրեագիտական փորձաքննության թիվ 877-16 եզրակացության համաձայն փորձաքննությանը ներկայացված մոխրագույն մետաղյա առարկան պատրաստված է ինքնաշեն եղանակով՝ կռիվազենքերի նմանողությամբ և դասվում է հարվածող-փշրող սառը զենքերի շարքին:

Փաստի առթիվ 11.04.2016թ. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 4-րդ մասով հարուցվել է թիվ 14121316 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ քրեական գործով կասկածյալ Ստեփան Վասիլի Ռոժկովը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին և տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ վերջինիս հետ անհրաժեշտ է կատարել քննչական գործողություններ, որի համար անհրաժեշտ է գործին թարգման ներգրավել, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածով հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 14121316 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Ֆինլուու» ՍՊԸ տնօրեն, թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանին, ով հավասարապես տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին:
2. Թարգման Վարդուհի Շահինյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Քննիչ

էդ. Շ. Խալաթյան

Որոշմանը ծանոթացա, միաժամանակ
ինձ բացատրվել են իմ իրավունքներն
ու պարտականությունները

Թարգման՝

14.04.2016թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Էդ. Խալաթյանս կազմեցի սույն տեղեկանքը այն մասին, որ վարույթումս քննվող թիվ 14121316 քրեական գործով 14.04.2016թ. որոշմամբ որպես թարգմանիչ ներգրավեցի «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդուհի Ավետիսի Շահինյանին, որը կատարեց բանավոր թարգմանություն ոուսերենից հայերեն և հակառակը՝ 10 ժամ 25 րոպե տևողությամբ:

Արաբկիր վարչական շրջաննի
քննչական բաժնի ավագ քննիչ՝



Էդ. Խալաթյան

04. 05. 2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

ք. Երևան

19 ապրիլի 2016թ.

ՀՀ ԶԿ Աջափնյակ և Ղափթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Մարությանս վերանայելով վարույթիս թիվ 10117716 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016թ. ապրիլի 18-ին «Էսկուլապ» ՍՊԸ-ի աշխատակից Սոնա Կարենի Ղանիելյանը ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում է տվել, որ 2016թ. ապրիլի 18-ին ժամը 21:20-ի սահմաններում, երբ գտնվել է աշխատանքի վայրում՝ Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի 52-րդ հասցեում գործով «Էսկուլապ» ՍՊԸ-ին պատկանող դեղատանը, անհայտ անձը դիմակավորված մտել է դեղատան սրահ և դանակով իր առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով գումար պահանջել, ապա դրամարկղից հափշտակելով 90.000 ՀՀ դրամ՝ դիմել փախուստի:

Դեպքի առթիվ 2016 թվականի ապրիլի 19-ին Աջափնյակ և Ղափթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 10117716 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Արման Մարտունի Պետրոսյանին:

Նկատի ունենալով, որ Արման Մարտունի Պետրոսյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, հետևաբար նրան հարցաքննելու համար անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ, որը տիրապետում է ռուսերենին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83 հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Ֆինլու» ՍՊԸ-ի ռուսերենի թարգմանիչ Անուշ Սուրենի Խանիկյանին, որն քրեական գործով չչափազորված անձ է:
2. Թարգմանիչ Անուշ Սուրենի Խանիկյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

Ավագ քննիչ

Ա.Մարության

Սույն որոշումն ինձ հայտարարվել է «19» ապրիլի 2016թ.: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ

Ա.Խանիկյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, քրեական պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

Ավագ քննիչ

Ա.Մարության

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

03.06.2016թ.

ք.Երևան

Ես՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի Ավագ քննիչ Ա.Մարության կազմեցի սույն տեղեկանքը այն մասին, որ վարույթումս քննված 10117716 քրեական գործով «Ֆինլուու» ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Խանիկյանը մասնակցել է որպես ռուսաց լեզի թարգմանիչ և կատարել 12 ժամ 20 րոպե բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ



Ա.Մարության

Որոշում
թարգմանիչ հրավիրելու մասին

ք.Երևան

20 ապրիլի 2016թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության կապիտան Գ.Սաղոյանս, վերանայելով վարույթիս թիվ 16806815 քրեական գործի նյութերը,

Պարզեցի

2015թ. դեկտեմբերի 3-ին Երվանդ Ավետիքի Բաբայանը ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նոյեմբերի 26-ին, ժամը 18:00-ի սահմաններում Հարավ-արևմտյան Բ 2 թաղամասում իր ծանոթ Արմենը հարվածել ու հրել է իրեն, որի հետևանքով ինքն ընկել է ու ստացել աջ ազդրի կտրվածք:

Դեպքի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ ոմն Արմենը հանդիսանում է Երևան քաղաքի բնակիչ Արմեն Պավլիկի Հովհաննիսյանը:

Դեպքի առթիվ 14.12.2015թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 16806815 քրեական գործը:


Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել դեպքին ակնատես Հրայր Բուրբենի Թաթոյանին: Վերջինս ներկայացել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին և հայտնել, որ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում դատավարության լեզուն հայերենն է, իսկ Հ.Թաթոյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի, վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ.և 83-րդ հոդվածներով,

որոշեցի

1.Թիվ 16806815 քրեական գործով Հրայր Թաթոյանի հետ քննչական գործողություններ կատարելու համար որպես թարգմանիչ հրավիրել „Ֆինլուու„ ՍՊԸ-ի տնօրեն, լիցենզավորված թարգմանչուհի Վարդուհի Ավետիսի Շահինյանին:

2.Որոշումը ծանոթացնել Վ.Շահինյանին, նրան պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ավագ քննիչ  Գ.Սաղոյան


Տեղեկանք

26 ապրիլի 2016թ.

ք.Երևան

Ես՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի պալագ քննիչ, արդարադատության կապիտան Գոռ Սաղոյանս, վարույթումս քննվող թիվ 16806815 քրեական գործի անհրաժեշտությունից ելնելով հրավիրեցի որպես թարգմանիչ «Ֆինլու», ՍՊԸ-ի տնօրեն Վարդուհի Ավետիսի Շահինյանին, ով կատարեց բանավոր հայերենից ռուսերեն թարգմանություն 3 ժամ տևողությամբ:

Ավագ քննիչ



Գոռ Սաղոյան

23
Վ.Ք.
09/11/16

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

20 ապրիլի 2016թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Ա.Մ.Քոչարյանս, քննարկելով Մանուշեր Յեղուլահի Ալիփուրի հաղորդման հիման վրա նախապարաստված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016թ.-ի մարտի 30-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, անհայտ անձը, թիվ 23 երթուղային ավտոբուսի մեջ, Մանուշեր Յեղուլահի Ալիփուրի պայուսակից գաղտնի հափշտակել է ընդհանուր խոշոր չափի՝ 27.234 «Ղրամին համարժեք 50 Եվրո արժողության դրամապանակը, որի մեջ եղել են 1.198.318 «Ղրամին համարժեք 2.200 Եվրո գումար, Գերմանիայի Դաշնային Հանրապետության «<DBK>> և Իրանի Հանրապետության «<Մելաթ>> բանկերի պլաստիկ քարտեր, նույնականացման քարտ, վարորդական իրավունքի վկայական և գեղջի քարտեր:

Դեպքի առթիվ 06.11.2015թ-ին «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում «Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 324-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09111616 քրեական գործը և կատարվել է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Մանուշեր Յեղուլահի Ալիփուրին և Նասրին Ալիոնեզա Նոուզարին չեն տիրապետում հայերեն բանավոր և գրավոր լեզվին, այլ ազգությունն փորձաքննում են պարսկերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի


1.Վարույթիս թիվ 09111616 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊ ընկերության աշխատակից՝ թարգմանիչ Հերոս Ղարամանի Դիդարյանին /անձնագիր AA 0002221, տրված 15.03.2013թ. 002-ի կողմից/, որին պարզաբանել «Քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով և նախազգուշացնել «Քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝



Ա.Մ.Քոչարյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են Թարգմանիչ՝



20 ապրիլի 2016թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Ա.Մ.Քոչարյանս, Մանուկեր Ալիփուրի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով հարուցված թիվ 09111616 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ թարգմանիչ Հերոս Ղարամանի Դիդարյանը, ով հանդիսանում է «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից, թիվ 09111616 քրեական գործով որպես թարգմանիչ է ներգրավվել 20.04.2016 թվականին և սույն քրեական գործի շրջանակներում կատարել է 6 ժամ 20 րոպե ընդհանուր տևողությամբ հայերենից պարսկերեն և հակառակը բանավոր թարգմանություններ:

Քննիչ՝



Ա.Մ.Քոչարյան

03.06.2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

ք.Գյումրի

21 ապրիլի 2016թ.

« քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Մ.Մ.Մարտիրոսյան, վերանայելով վարույթում քննվող թիվ 18150816 քրեական գործի նյութերը.
ՊԱՐԶԵՑԻ

Գյումրի քաղաքի Արագած 6-րդ թաղ 2-րդ շենքի բնակիչ Լևոն Ալեքսանի Խաչատրյանը, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2016թ. հունվարի 25-ին, ժամը 01:30-ի սահմաններում, Ռ-Դ ՊՆ 04436 գործառնախ պարսպի քանդված հատվածից մուտք գործելով գործառնախ տարածք՝ փորձել է գողանալ գործառնախ տարածքում դրված 2 տարաներով վառելանյութը, սակայն իր հանցավոր մտադրությունը չի կարողացել ավարտին հասցնել, քանի որ լսելով մոտեցող զինծառայողների ձայները՝ դիմել է փախուստի, որից հետո բռնվել է «Նուստիկանության Մուշի բաժնի աշխատակիցների կողմից:

Դեպքի առթիվ 26.01.2016թ. «Նուստիկանության Մուշի բաժնում» «Ջր. օր-ի 34-177-րդ հոդ. 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 18150816 քրեական գործը:

03.03.2016թ. թիվ 18150816 քրեական գործն ստացվել է «ՔԿ ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է հարցաքննել Ռ-Դ 04436 գործառնախ զինծառայողներ Մակեն Իլյային, Պավել Սորոկինին, Դմիտրի Կալինինին, ողքեր չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ քրեական դատավարության լեզուն հայերենն է, ուստի անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ՝ ռուսերենից հայերեն թարգմանություն կատարելու նպատակով: Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Ջր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով ռուսերենից հայերեն թարգմանություն կատարելու համար որպես թարգմանիչ հրավիրել 'Ֆինլոու' ՍՊԸ թարգմանիչ՝ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին, որն ազատ տիրապետում է նշված լեզուներին:
2. Որոշման մասին հայտնել Ա.Ս.Գրիգորյանին և նրան բացատրել «Ջր. դատ. օր-ի 83-րդ հոդ. նախատեսված թարգմանիչի իրավունքները և պարտականությունները:

ՏԱՆՆԵՐՈՐԴ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՔՆՆԻՉ՝

Մ. Մարտիրոսյան

Մ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Որոշումն ինձ հայտնված է '27'-----09----- 2016թ.

բացատրված են «Ջր. դատ. օր-ի 83-րդ հոդ. նախատեսված իրավունքներս ու պարտականություններս, միաժամանակ նախազգուշացված եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Ջր. օր-ի 338-րդ հոդ. նախատեսված քր. պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Մ. Մարտիրոսյան *Վ. Գրիգորյան*

Տեղեկանք

21 ապրիլի 2016թ.

Ք. հայտարարի

ՀՀ քննչական կոմիտեի ՋԶԳՎ տասներորդ կայագորային քննչական բաժնի քննիչ Մ.Սարգսյրոսյանս, վարույթունս քննվող 18150816 քրեական գործով, 21.04.2016թ. որպես թարգմանիչ հրավիրել եմ Finlaw ՄՊԸ թարգմանիչ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին, ով թարգմանել է քրեական գործով վկաներ Իյա Անդրեյի Մակենի, Պավել Իգորի Մորոկինի և Դմիտրի Էդուարդի Կալինինի ցուցմունքները: Ընդհանուր քննչական գործողությունների տևողությունը կազմել է 10 ժամ:

ՀՀ ՋԶԳ ՋԶԳՎ 10 լու: 144- թ մնչ

Մ.Սարգսյրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի քարգմանիչ՝ Հերոս Ղարամանի Դիդարյանտին որպես քարգմանիչ հրավիրելու մասին

22 ապրիլի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Վ.Գ.Պողոսյանս, քննարկելով վարույթիս թիվ 13132616 քրեական գործերի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի մարտի 11-ին ԻԻՀ քաղաքացի Արշիա Ամիրի Մոնջեզին հաղորդում է տվել ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում այն մասին, որ նույն օրը ժամը 19:00-ի սահմաններում Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայում իր ծանոթ Վահիդ Բաբայի Ռեզան անհիմն վիճաբանել է իր հետ և հարվածներ հասցրել դեմքի շրջանում՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Դեպքի առթիվ նախապատրաստված նյութերի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 13132616 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ նախաքննությամբ գործով անցնող դատավարության կողմեր հանդիսացող, տուժողը, վկան, կասկածյալը չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում են պարսկերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է քրեական գործով հրավիրել քարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 13132616 քրեական գործով հրավիրել «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊ ընկերության քարգմանիչ՝ Հերոս Ղարամանի Դիդարյանտին / ծնված 23.06.1962թ., անձնագիր՝ AA 0002221, տրված 002-ի կողմից, 15.03.2013թ./, ով տիրապետում է հայերեն, պարսկերեն գրավոր և բանավոր լեզուներին:

Թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ

Վ.Պողոսյան

Ինձ բացատրված է որպես քարգմանիչ իմ իրավունքներն ու պարտականություններ: Միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ քարգմանության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ

Հ.Դիդարյանտ

Տեղեկանք

26 ապրիլի 2016թ.

ք. Երևան

Ես՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Գ.Պողոսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթիս թիվ 13132616 քրեական գործով «Ֆին Լոու» ՍՊ ընկերության պարսկերեն լեզվի թարգմանիչ՝ Հերոս Դիդարյանտը նույն քրեական գործով կատարել է 5 ժամ պարսկերեն բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ,
արդարադատության կապիտան՝



Վ.Գ.Պողոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգման ճանաչելու մասին

<<25>> 04. 2016թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ՝ Գ.Հ.Ավագյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 13128216 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի մարտի 16-ին ոստիկանության Կենտրոնականի բաժնից Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին են ստացվել Նուհադ Շարիֆի Հալլիկի հաղորդման առթիվ ոստիկանության Մալաթիայի բաժնում նախապատրաստված նյութերն այն մասին, որ 2016 թվականի փետրվար ամսվա կեսերին Երևան քաղաքի Միրաքյան 36 տանը տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Սերգեյ Գարեգինի Կարապետյանը Նուհադ Շարիֆի Հալլիկի հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ, որից երկու օր անց Երևան քաղաքի Պուշկին 35-10 հասցեում գործող «Բաբիգ» ռեստորանում գաղտնի հափշտակել է վերջինիս՝ Լիբանանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը:

Դեպքի առթիվ «Ոստիկանության Կենտրոնականի բաժնում նախապատրաստված նյութերի հիման «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում 17.03.2016թ. «Քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13128216 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում Սերգեյ Կարապետյանը ներկայացրել է լազերային սկավառակ, որում ըստ իրեն պարոնակվում են տեսաձայնագրություններ, որոնք կատարվել են 2016 թվականի փետրվար 15-ին Երևան քաղաքի Միրաքյան 36 տանը Նուհադ Հալլիկի հետ իր խոսակցության ընթացքում, իսկ տեսաձայնագրությունը կատարվել է Արամ Հարությունյանի կողմից բջջային հեռախոսով: Ս.Կարապետյանը նշել է, որ այդ խոսակցությունը տեղի է ունեցել անգլերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ «Հ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ նշված լազերային սկավառակում առկա ձայնագրությունը իրենից ներկայացնում է անգլերեն լեզվով խոսակցություն, ուստի անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ և որպես թարգմանիչ ճանաչել «Ֆինլու» ՍՊԸ-ի աշխատակից, թարգմանիչ Ալվինա Պողոսի Հովհաննիսյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Վարույթումն գտնվող թիվ 13128216 քրեական գործով թարգմանիչ ճանաչել <<Ֆինլոու>> ՍՊԸ-ի աշխատակից, թարգմանիչ Ալվինա Պողոսի Հովհաննիսյանին /ծնված 29.09.1979, ՀՀ, հաշվարկված ՀՀ, քաղաք Երևան, Ծարավ Աղբյուրի 55/5-185/:
2. Ալվինա Պողոսի Հովհաննիսյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Գ.Ա.Ավագյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա.Պ. Հովհաննիսյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 13128216 քրեական գործով

Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի վարույթում քննվաող թիվ 13128216 քրեական գործով 25.04.2016թ. որոշմամբ որպես թարգմանիչ ներգրավվել է «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Ալվինա Պողոսի Հովհաննիսյանը, որը կատարել է 9 ժամ տևողությամբ անգլերենից հայերեն բանավոր թարգմանություններ, բացի այդ, կատարել է ծայնագրության անգլերենից հայերեն թարգմանության սղագրություն՝ ան գլերենից հայերեն գրավոր թարգմանություն ընդհանուր 74003 նիշ:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների
քննչական բաժնի քննիչ,
արդարադատության լեյտենանտ՝

27.04.2016թ.



Գ. Ա . Ավագյան